ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՓՎ 2017թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի պարոն մարզպետ, պարոն Եմիշյան, պարոնայք սպաներ, տիկնայք և պարոնայք.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻ նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի ՄՓՎ գործունեությունն ուղղված է եղել մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝

- Քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստումը,
- արտակարգ իրավիճակների և դեպքերի արձագանքումը,
- մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը,
- արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների նվազեցմանն ուղղվածմիջոցառումներին, մարզի բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակների ներգրավման ապահովումը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիականպաշտպանության հարցերի հրապարակայնությունը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ղեկավար մարմինների և բնակչության ուսուցման կազմակերպումը և իրականացումը,
- կանխագելիչ միջոցառումների իրականացումը,
- հրշեջ-փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի ՄՓՎ կողմից հաշվետու ժամանակահատվածում հիմնական միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումները կատարվել են ամբողջությամբ:

1. ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

2017թ. հաշվետու ժամանակահատվածում Արագածոտնի ՄՓՎ օպերատիվ խումբը և ենթակա ստորաբաժանումները արձագանքել են 766 դեպք-պատահարների /2016թ-ին 781/, դեպքերի թիվը նվազել է 15-ով կամ 1.9 %-ով), դեպքերի հետևանքով զոհվել է 12 մարդ (2016թ-ի 20-ի համեմատ զոհերի թիվը նվազել է 8-ով կամ 40 %-ով), մարմնական վնասվածքներ են ստացել (վիրավորվել են) 90 մարդ (2016թ-ի 116-ի համեմատ, վիրավորների թիվը նվազել է 26-ով կամ 22.4%-ով):

Գրանցված դեպքերից՝

378-ը՝ տեխնածին են, որը կազմում է ընդհանուր դեպքերի 49.34 %-ը, (2016թ.՝ 294, կամ 37,6%-ը), որոնց հետևանքով զոհվել է 10 մարդ, (2016թ.՝ 10), վիրավորվել է՝ 82 մարդ

(2016թ.՝ 105): Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը աճել են 84-ով կամ 28.5%-ով, զոհերի թիվը նույն է, իսկ վիրավորների թիվը նվազել է՝ 23-ով կամ 21.9 %-ով:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 275-ը կամ (72.7%-ը) հրդեհի դեպքերն են (2016թ. 205, կամ 69,7%): Հրդեհների թիվը մարզում աճել է 72-ով կամ (35,1%-ով): Հրդեհների հետևանքով զոհեր չկան, այրվածքներ են ստացել 2 քաղաքացի, 2016թ-ին նույնպես այրվածքներ են ստացել 2 քաղաքացի:

Գրանցվել է հսկվող կրակի 6 դեեպք, որը կազմում է տեխնածին դեպքերի 1.5%-ը /2016թ. 1, կամ 0.34%-ը/, հրդեհ չի հայտնաբերվել 29 կանչերի դեպքում, որը կազմում է տեխնածին դեպքերի 7.6%-ը /2016թ 13, կամ 4.4%-ը/, գրանցվել է ծխապատման 3 դեպք, որը կազմում է տեխնածին դեպքերի 07 %-ը /2016թ 3, կամ 1%-ը /: Այսպիսով հսկվող կրակի դեպքերը աճել են 5-ով, կամ 83.3%-ով, կեղծ կանչերի թիվը աճել է 16-ով, կամ 55.1%-ով, ծխապատման դեպքերի քանակը նույնն է:

Հրդեհների գերակշռող մասը կազմել են խոտածածկ տարածքների հրդեհները՝ 139 դեպք կամ 50.5 %, 37-ի դեպքում կամ 13%-ը հրդեհը ծագել է բնակելի շինություններում, գրանցվել է տրանսպորտային միջոցների հրդեհվելու 11 դեպք, կամ հրդեհների (4%-ը), անասնակերի հրդեհի 14 դեպքեր կամ հրդեհների (5 %-ը), կազմակերպություններում 3, կամ 1,1%-ը, բուսածածկ և անտառային 16 դեպք կամ (5,8 %-ը), մյուս 55 դեպքերը կամ դեպքերի 20%-ը ծագել են այլ տարածքներում:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 50-ը ավտովթարներն են, որը կազմում է ընդհանուր դեպքերի 6.5%-ը, /2016թ 72, կամ 9.2%-ը/: Ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառով զոհվել է 10 մարդ, կամ ընդհանուր զոհերի 83.3%-ը, /2016թ 10, կամ 50%-ը/, վնասվածքներ է ստացել 82 քաղաքացի, կամ ընդհանուրի 91%-ը, /2016թ 103, կամ 88,7%-ը/: Ավտովթարների դեպքերը նվազել են 22-ով, կամ 30.5%-վ, զոհերի թիվը նույնն է, վիրավորների թիվը նվազել է 21-ով, կամ 20,3%-ով:

ՄՓՎ ՃԿԿ-ում գրանցվել է 88 թունավորման դեպքեր: Թունավորումների արդյունքում մահացել են 2 քաղաքացիներ, տուժել է 106 քաղաքացի, /2016թ-ին՝ գրանցվել է թունավորման 58 դեպք, տուժել են 61 քաղաքացիներ: Թունավորումների դեպքերը աճել են 30-ով, կամ 51.7%-ով:

2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ, օբյեկտային վարժանքներ, հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: Բոլոր անցկացված ուսումնավարժությունները ընդգրկել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների հիմնարար հարցերը, այնպես էլ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման խնդիրները:

Համաձայն 2017թ աշխատանքային պլանի հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել և անցկացվել է 34 շտաբային ուսումնավարժություն, որից 2-ը մարզպետարանում, 2-ը ՄՓՎ-ում, 30-ը համայնքներում, 1 ցուցադրական ՀՏՈՒ, 3 օբյեկտային վարժանք՝ Արագածի և Արտենիի առողջության կենտրոններում, <<Օշական>> մանկական վերականգնողական կենտրոնում, 8 հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝ որից 3-ը ԱՏՃ-ներում, 1-ը <<Արմեն Թել>> ՓԲԸ Աշտարակի տեղամասում, 2-ը <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ Թալինի և

Աշտարակի տարածքային տեղամասում, 1-ը ՀԷՑ ՓԲԸ <<Մուսալեռ>> մ/ճ Աշտարակի տեղամասում, 1-ը <<Թամարա Ֆրութ>> ՓԲԸ-ում:

Մարտի 1-ին ՔՊ միջազգային օրվա և սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում անցկացվել է 9 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և մի շարք դպրոցներում ուսուցչական կազմի կողմից ընթերցվել են դասախոսություններ:

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Համաձայն մարզպետի որոշումների և կարգադրությունների 2017թ. ճշգրտվել են մարզի ՔՊ պլանը, ծառայությունների ՔՊ պլանները, զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպություններին տրամադրվել են տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթի օրինակելի ձևերը: Լրամշակվեն են մարզի 120 դպրոցների ՔՊ պլանները և պլան-ժամանակացույցերը: Զորահավաքային առաջադրանք ունեցող 12 կազմակերպություններից մեկը՝ <<Գայանե Մկրտչյան>> ԱՁ հացի արտադրությունը դադարեցրել է իր գործունեությունը: Նախորդ տարվանից տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթը չմշակած 6 կազմակերպություններից նշված փաստաթղթերի փաթեթը մշակել են 4-ը, չեն մշակել <<Գնթունիկ>> ՍՊԸ հացի արտադրությունը և <<Աշտարակ Կաթ>> ՓԲԸ կաթնամթերքի արտադրությունը: Վերջինս չի մշակել կապված ընկերության կարգավիճակի հետ: Ընդհանուր հաշվով 11 կազմակերպություններից նշված փաստաթղթերի փաթեթը մշակել են 9-ը:

Տարվում են աշխատանքներ մարզի տարահանման մարմինների անհրաժեշտ փաստաթղթերի կազմման ուղղությամբ: Մինչ օրս կատարողներին է հասցվել 114 տարահանման մարմինների փաստաթղթեր: ՀՀ Արագածոտնի մարզում առկա է 1 մարզային, 100 համայնքային տարահանման հանձնաժողովներ, որտեղ ծավալվում են 7 երկարատև բնակության կետ և 25 ժամանակավոր տեղակայման կետեր:

Համաձայն ՀՀ վարչապետի <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման ժամանակացույցը հաստատելու մասին>> 2014 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 934-Ն, << Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման 2017թվականի պլանը հաստատելու մասին>> 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 1164-Ն որոշումների և ՀՀ ԱԻ նախարարի 15 հունիսի 2017թ. N 651 հրամանի, 2017 թվականի հունիսի 27-30-ը Արագածոտնի մարզի ՔՊ ծառայություններում, 8 համայնքներում և 4 կազմակերպություններում իրականացվել է քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում: Վերը նշվածի կապակցությամբ Արագածոտնի ՄՓՎ կողմից մշակվել և 2017թ. ապրիլի 10-ին ՀՀ Արագածոտնի մարզպետի հաստատմանն էր ներկայացվել <<ՀՀ Արագածոտնի մարզի ՔՊ ղեկավար կազմի, ՔՊ ծառայությունների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման 2017 թվականի նախապատրաստական միջոցառումների պլան-ժամանակացույցը>>:

ՀՀ Արագածոտնի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակը գնահատվել է բավարար:

4. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզային փրկարարական վարչությունում և ստորաբաժանումներում գործում են 1 ինտերնետ կապի միջոց, ինտերնետ կապով գործող 13 հեռախոսահամար, 8 օնլայն տեսանկարահանող հեռախոս, 8 ստացիոնար, 11 շարժական և 32 դյուրակիր ռադիոկայաններ, 4 լարային կապուղիներ:

Արագածոտնի մարզի կապի և ազդարարման համակարգը ներառում է <<Արմեն Տել>> ՓԲԸ Աշտարակի, Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի տարածքային ստորաբաժանումները: Նշված ստորաբաժանումների բազայի վրա ստեղծվել է ՔՊ մարզային կապի և ազդարարման ծառայություն, որը գտնվում է մարզկենտրոնում:

Լրամշակվել են ազդարարման սխեմաները, որոնցով մարզի ղեկավար կազմի ազդարարումը իրականացվում է ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի կրտսեր հրահանգչի միջոցով:

Մարզի համայնքների ազգաբնակչության ազդարարումը իրականացվում է համայնքներում տեղադրված էլ. շչակներով, որոնք միացվում են տեղերից: Արագածոտնի ՄՓՎ-ի և նրա ենթակա ստորաբաժանումների ծառայողների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ թվով 51 էլ. շչակներից աշխատում է միայն 13-ը:

Շչակների օգտագործումը, շահագործումը և պահպանությունը իրականացնում են համայնքների և կազմակերպությունների ղեկավարները:

Շչակներ չունեցող համայնքներում ազդարարումը իրականացվում է շարժական բարձրախոսների և սուրհանդակների միջոցով:

Ըստ հաշվարկների՝ մարզում անհրաժեշտ 129 շչակներից առկա են՝

Ս-40՝ 28 հատ, որից սարքին 1 հատ, անսարք 27 հատ,
Ս-28՝ 7 հատ, որից սարքին 1 հատ, անսարք 6 հատ,
ԼԴ-800՝ 16 հատ, որից սարքին 11 հատ, անսարք 5 հատ,
Պակասում է 78 շչակ, որից ԼԴ-800՝ 78 հատ:

5. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ միջպետական մայրուղիներում ձնաբքի ժամանակ մարդկանց և տրանսպորտային միջոցներն անվտանգ տարածք տեղափոխելու, բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով, դեկտեմբերի 25-ից Աշտարակ-Վանաձոր միջպետական ավտոճանապարհի 48-րդ կիլոմետրում ստեղծվել է առաջնային օգնության կետ:

Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետի 06.02.2017թ. <<ՀՀ Արագածոտնի մարզում գարնանային հորդացումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների մասին>> թիվ 6-Ա կարգադրության, Արագածոտնի մարզպետարանում անցկացվել է խորհրդակցություն սելավավտանգ 20 համայնքների ղեկավարների հետ, հսկողություն է սահմանվել վերը նշված կարգադրությամբ միջոցառումների կատարմանը:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 14.03.2017թ. թիվ 2602-17 հանձնարարականի, ուսումնասիրվել է ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գտնվող սելավատարերի, հեղեղատարերի, գետերի հուների վիճակը, բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների, բնակչության գույք-սարքավորումների սելավների ռիսկից

պաշտպանելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 05.12.2017 թ-ի թիվ 1489 հրամանի 2-րդ կետի ՓԾ տնօրենի հանձնարարականով Արագածոտնի ՄՓՎ-ի կողմից կազմակերպվել և անցկացվել է Ապարանի և Արագածի ՀՓՋ-ների անձնակազմի <<Աղետների ռիսկի կառավարումը տեղական մակարդակում>> կիրառական ուղեցույցի ուսուցում:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. փետրվարի 27-ի թիվ 1910-17 հանձնարարականի, յուրաքանչյուր ամիս սահմանված կարգով ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել, մարզում <<Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլան>>-ների վերաբերյալ տեղեկատվությունը:

2017թ-ի նոյեմբերի 6-ին Արագածոտնի մարզային փրկարական վարչության պետի մոտ հրավիրվել է խորհրդակցություն, որին մասնակցել են Արագածոտնի մարզի ավտոմոբիլային ճանապարհները սպասարկող 5 կազմակերպությունների ներկայացուցիչները և մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի բաժնի պետը: Խորհրդակցության ժամանակ քննարկվել է ձմեռային ամիսներին մարզի ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքներնին արդյունավետ նախապատրաստվելու և ճանապարհները սպասարկող կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ճշգրտման հարցերը: Խրհրդակցության արդյունքում ճշգրտվել է կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում գործելու պլանները, իսկ <<ՖԱՐՄԱՐ ՇԻՆ >> ՍՊԸ-ի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը ամբողջությամբ թարմացվել է:

6. ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակահատվածում ամենօրյա աշխատանքներ են տարվել փրկարարական ուժերի մշտական մարտական պատրաստության պահպանման ուղղությամբ:

ՄՓՎ ստորաբաժանումների միջև անցկացվել է հրշեջ-կիրառական մարզաձևերի մրցումներ:

ՄՓՎ ստորաբաժանումների միջև անցկացվել է մարզական միջոցառումներ՝ վոլեյբոլի առաջնության հաղթող է դարձել Ապարանի թիվ 20 ՀՓՋ, շախմատի առաջնության հաղթող է ճանաչվել ՃԿԿ ՕՀՀ կրտսեր հրահանգիչ Ս.Եգանյանը:

ՄՓՎ և հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անձնակազմից ընդունվել է մասնագիտական և ֆիզիկական պատրաստության ստուգարքներ:

Պարբերաբար ստուգվել են մարզի հրշեջ-փրկարարական ջոկատների ծառայության կրման ընթացքը: Հսկողություն է իրականացվել հրշեջ ավտոմեքենաների շահագործման և ելքերի գրանցման նկատմամբ:

Աշխատանքներ են տարվել հրդեհաշիջման քարտերի և պլանների լրամշակման ուղղությամբ:

Մարզի տարածաշրջանների օբյեկտներում և կազմակերպություններում կազմակերպվել և իրականացվել է հրշեջ մարտավարական վարժանքներ. տարածաշրջանները սպասարկող ՀՓՋ-ների ուժերով և միջոցներով:

Մարզի Բյուրական, Անտառուտ, Լուսագյուղ և Ձորագլուխ համայնքներում ստեղծված հրշեջ կամավորական խմբերի հետ պարբերաբար անցկացվել են դասախոսություններ <<Անտառային հրդեհների հրդեհաշիջում>> թեմայով:

7.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՄՓՎ աշխատակիցների կողմից ծառայողական և աշխատանքային գործունեության ընթացքում օրինականության, աշխատանքային և ծառայողական կարգապահության պահպանման նկատմամբ մշտական հսկողություն է իրականացվում, թույլ տրված ծառայողական իրավախախտումների կանխարգելման և բացահայտման համար:

ՄՓՎ ստորաբաժանումների անձնակազմի հաճախելիության, նրանց կողմից աշխատանքային կարգապահության պահպանման նպատակով կազմակերպվել է անակնկալ ստուգումներ:

8.ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակաշրջանում Արագածոտնի ՄՓՎ 156 հաստիքից համալրված է 144-ը կամ 92,3%-ը: Արագածոտնի ՄՓՎ և նրա ստորաբաժանումներում առաջխաղացման է նեկայացվել 10 կրտսեր խմբի ծառայողներ:

Խրախուսման է արժանացել 2 ավագ խմբի ծառայող <<Լավագույն հրշեջ փրկարար>> մեդալով և ԱԻ նախարարի պատվոգրով, 13 ավագ խմբի և 49 կրտսեր խմբի ծառայողներ՝ «Անբասիր ծառայության համար 15 տարի» 2-րդ աստիճանի և 10 տարի 3-րդ աստրճանի մեդալներով, <<Լավագույն հրշեջ փրկարար>> մեդալով, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի պատվոգրով, ՀՀ Քննչական կոմիտեի պատվոգրով:

Մարդկանց անվտանգության և փրկության թեմայով «Արիության համաստեղություն» խորագրով ամենամյա փառատոնի շրջանակներում ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներից 2017 թվականին <<Լավագույնն ըստ մասնագիտության>> մրցանակաբաշխության անվանակարգերի չափորոշիչներով հաղթողներից <<Լավագույնն ըստ մասնագիտության>> մրցանակաբաշխության անվանակարգերի չափորոշիչներով հաղթողներ են ճանաչվել.

1. «Լավագույն հրշեջ-փրկարարական ջոկատ» անվանակարգում Ապարանի թիվ 20 հրշեջ փրկարարական ջոկատը,
2. «Լավագույն խմբի պետ (հրամանատար)» անվանակարգում Աշտարակի ՀՓՋ խմբի պետ, փ/ծ կապիտան Կարեն Գրիշայի Ղազարյանը,
3. «Լավագույն հերթափոխի պետ» անվանակարգում Արագածոտնի ՄՓՎ-ից թեկնածու չի առաջադրվել,
4. «Լավագույն հրշեջ-փրկարար» անվանակարգում Ապարանի ՀՓՋ ավագ հրշեջ, փ/ծ ավագ սերժանտ Թաթուլ Ջանիբեկի Ավետիսյանը:

Հաշվետու ժամանակաշրջանում կարգապահական կանոնների խախտումների համար ՀՀ ԱԻ նախարարի 17.03.2017թ. 298-Ա հրամանով նշանակվել է 1 ծառայողական քննություն: Կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 4 ծառայողներ:

Ծառայության է ընդունվել 13 կրտսեր խմբի ծառայողներ:

Ծառայությունից ազատվել է 19 կրտսեր խմբի և 1 ավագ խմբի ծառայող:

9.ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԾՈՎ

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 23.12.2016թ. հաստատված <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվող 2017 թվականի հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման>> և <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

կազմակերպությունների ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվող 2017 թվականի հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման>> ծրագրերի, 2017 թվականի փետրվարի 14–ին, հունիսի 14-ին, օգոստոսի 21-ին, հոկտեմբերի-19, Արագածոտնի մարզի ՔՊ 10 և Աշտարակ համայնքի 5 ծառայությունների, ինչպես նաև Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արագածի տարածաշրջանների կազմակերպությունների ՔՊ 285 շտաբի պետերի հետ անցկացվել են ընդհանուր պատրաստության պարապմունքներ, <<Տարահանված բնակչության կենսաապահովման կազմակերպումը>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքները, <<ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումների ապահովումը>>, <<Կազմակերպությունների (տնտեսության օբյեկտների) գործունեության կայունության բարձրացման հիմնական ուղիները: Տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի փաստաթղթերն ու դրանց մշակման կարգը>>, <<Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը, տարահանման մարմինները, դրանց կառուցվածքն ու խնդիրները>>, <<ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգը>>. ՔՊ կազմավորումների ուսուցուցումը, <<ՀՀ տարածքում ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում բնակչության ազդարարումն ու տեղեկատվության տրամադրման կարգը: Բնակչության գործողությունները ազդարարման ազդանշաններով>>,<<ՔՊ համակարգի պատրաստականության բերման կարգն ու միջոցառումները>>, <<ՔՊ պլաններին ներկայացվող հիմնական պահանջները, դրանց մշակման, համաձայնեցման և հաստատման կարգը>>, <<ՔՊ ծառայությունների կազմավորումների ստեղծման նախապատրաստման և գործունեության կարգը>> թեմաներով:

Մարզպետարանում դասընթացը անցկացրել են Արագածոտնի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխ. գ-տ Դ.Պետրոսյանը և ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ փոխ. գ-տ Ա.Հակոբյանը, տարածաշրջաններում համապատասխան ՀՓՋ հրամանատարները: Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր թվով պարապմունքներին մասնակցել են 330 ունկնդիր:

Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հաստատված, << Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ 2017թ. ուսումնական տարվա առաջին ինը ամսում ՀՀ Արագածոտնի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանի, նախատեսված 34 մասնակիցներից դասընթացներին մասնակցել են 14-ը:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 2017 թվականի հունվարի 17-ի թիվ 23-Ա հրամանի, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով կազմակերպությունների պատրաստման և աշխատակիցների ուսուցման պլանավորման ու կազմակերպման մեթոդական ցուցումները, համաձայն հավելվածների, Արագածոտնի մարզպետի հանձնարարականով, հասցվել է մարզի դպրոցներին:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. փետրվարի 24-ի թիվ 1745-17 հանձնարարականի, ըստ սահմանված ծրագիր, մարտ ամսին մարզի դպրոցներում կազմակերպվել և իրականացվել են պատանի հրշեջ-փրկարարների մարզական առաջնություններ, մարզային հավաքական թիմ ձևավորելու նպատակով է, որի արդյունքում ձևավորվել է մարզային հավաքական թիմ: Հայտերը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և <<Երկրապահ կամավորականների միության>> միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում, 09.02.2017թ. <<Հրդեհաշիջման կազմակերպումը հրդեհի հետախուզումը>>, թեմայով պատանի երկրապահների հետ անցկացվել է դասընթաց: Պատանի երկրապահների հետ կատարվել են ճանաչողական աշխատանքներ, ծանոթացվել են Արագածոտնի ՄՓՎ գործառույթներին, խնդիրներին, ՃԿԿ գործառույթներին, կատարվել են այցեր ՀՓՋ-ներ, ծանոթացվել են հրշեջ-փրկարարական տեխնիկային, գույքին, սարք-սարքավորումներին:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2017թ. մարտի 27-ի թիվ 337-Ա հրամանի պատանի հրշեջ-փրկարարների մարզային հավաքական թիմը 07.04.17թ. <<Հայաստան>> մարզական միության հասարակական կազմակերպության սպորտային հրապարակում մասնակցել է պատանի հրշեջ-փրկարարների հանրապետական մարզական առաջնությանը, գրավելով չորրորդ տեղը:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2017թ. ապրիլի 4-ի թիվ 381-Ա հրամանի, Արագածոտնի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Ամիրջանյանը և ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Հակոբյանը 2017թ մայիսի 24-ին ՀՀ ԱԻՆ--ում մասնակցել է <<Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը>> թեմայով ՇՈՒ-ին, իսկ մայիսի 25-ին տեղերում:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. հուլիսի 24-ի թիվ 31/271606-17 հանձնարարականի, նշված դասընթացներին Արագածոտնի ՄՓՎ-ից մասնակլցել են ԲՊ պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Դ.Պետրոսյանը և ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ ավ. լ-տ Գ.Ավագյանը:

Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և բնակչության պաշտպանության հարցերով գլխավոր վարչության ֆինանսավորմամբ, ԱՌՆԱՊ հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում, ՀՀ ԱԻՆ կողմից մշակված <<Տեղական մակարդակում ռիսկի կառավարման>> (ՏՄՌԿ) գործիքի կիրառական ուղեցույցի և <<Համայնքների Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) օրինակելի պլանի>> հետագա ներդրման համար, ՀՀ մարզերում նախատեսվում է զարգացնել համապատասխան կարողություններ, մասնավորապես՝ պատրաստել մասնագետներ, ովքեր կաջակցեն համայնքներին՝ գնահատելու իրենց համայնքներին սպառնացող ռիսկերը, մշակելու և իրականացնելու համապատասխան գործողություններ դրանց նվազեցման ուղղությամբ, ներառելով դրանք համայնքների ԱՌԿ պլաններում:

Այդ նպատակով ս/թ հուլիսի 27-28-ին Հանքավանի <<Անի Ռեզորթ>> հյուրանոցային համալիրում իրականացվել է երկօրյա վերապատրաստման դասընթաց ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունների և մարզպետարանների համապատասխան աշխատակիցների համար:

10.ԲՈՒԺ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2017 թվականի ընթացքում անցկացվել է ՄՓՎ փրկարար ծառայողների բուժ կանխարգելիչ հետազոտություններ (դիսպանսերիզացիա):

11.ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ վերանորոգման են ենթարկվել Աշտարակի ՀՓՋ-ի ԶԻԼ 130 ԱԲ 40, կամազ 53229 ԱԲ8-40, Ապարանի ՀՓՋ-ի ԶԻԼ 131 ԱԲ-40 և ՈՒՐԱԼ 4320 կունգ, Արագածի ՀՓՋ-ի ԶԻԼ 130, ԶԻԼ 131 կունգ և ԶԻԼ 131 ԱԲ-40 մակնիշների, ինչպես նաև ՈՒԱԶ 5142 ավտոմեքենաները: Նշված ավտոմեքենաների վերանորոգման աշխատանքները իրականացվել են ՄՓՎ ուժերով՝ ԹՆԱՎ-ի աջակցությամբ:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի հրամանի Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնից հատկացվել է 1 կամազ մակնիշի հրշեջ ավտոմեքենա, 1 ամենագնաց /կվադրոցիկլ/, հիդրավլիկ և մեխանիկական հատուկ գործիքներ, տարբեր չափսերի վրաններ, գեներատորներ և այլ անհրաժեշտ գույք, ինչպես նաև ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնում անցկացվել է ճահճագնացների (կվադրոցիկլներ) տեսական և գործնական դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում Արագածոտնի ՄՓՎ անձնակազմի ուժերով, մարզի համայնքների աջակցությամբ շարունակվում են ՄՓՎ նոր վարչական շենքի շինարարական աշխատանքները:

Մասնակի վերանորոգվել են բոլոր ՀՓՋ վարչական շենքերը:

12.ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 2017 թվականի ընթացքում ընդունվել է 9 իրավական ակտ՝

13. 2017թ. փետրվարի 6-ի <<ՀՀ Արագածոտնի մարզում գարնանային հորդացումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների մասին>> թիվ 41-Ա կարգադրություն,
14. 2017թ. փետրվարի 9–ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 1Գ որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանում և ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանի կատարումն ապահովող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 1-ԱԳ որոշում,
15. 2017թ. փետրվարի 10-ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 84-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 15-Ա որոշում,
16. 2017թ. փետրվարի 10-ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N42-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 16-Ա որոշում,
17. 2017թ. փետրվարի 10-ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի N 64-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 17-Ա որոշում,
18. 2017թ. մարտի 2–ի <<ՔՊ միջոցառումների կազմակերպումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ>> թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացման մասին թիվ 2-ԱԳ որոշում,
19. 2017թ. մարտի 29–ին <<ՀՀ Արագածոտնի մարզի ՔՊ ծառայությունների ՔՊ պլանները ճշգրտելու մասին>> թիվ 5-ԱԳ որոշում,
20. 2017թ. մայիսի 22–ին <<ՔՊ միջոցառումների կազմակերպումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ>> թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացման մասին թիվ 7-ԱԳ որոշում,
21. 2017թ. օգոստոսի 11–ի <<Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում երկրաշարժի հետևանքով փլուզված շենքերում>> թեմայով ցուցադրական հատուկ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին թիվ 156-Ա որոշում:

22.ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

2017թ-ին ՄՓՎ կողմից ճշգրտվել են՝

- <<Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը>>,
- <<Արտակարգ իրավիճակներում ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը>>,
- <<ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության տարահանման պլանը>>,
- <<ՀՀ Արագածոտնի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապարտարաստման մարզային պլանը>>:

-Ճշգրտվել են համայնքային և ՔՊ ծառայությունների ՔՊ պլանները,

-ՄՓՎ նախաձեռնությամբ լրամշակվեն են մարզի 51 դպրոցների ՔՊ պլանները և պլան-ժամանակացույցերը:

-ՄՓՎ կողմից մեթոդական օգնություն է ցուցաբերվել Մարզի զորահավաքային առաջադրանք ունեցող 12 կազմակերպություններին՝ տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթի մշակման կապակցությամբ: 2016թ-ին 5-ը կազմակերպությունների կողմից ավարտել են տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթի մշակման գործընթացը:

Ի կատարումն <<Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին>> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի թիվ 494-Ա և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի թիվ 498-Ա համատեղ հրամանի պահանջների՝ մինչ օրս Արագածոտնի ՄՓՎ համաձայնեցման են ներկայացրել 77 ուսումնական հաստատությունների պլաններ, որից՝ 77 դպրոցների պլաններ համաձայնեցվել է և հաստատվել է, 45 դպրոցների պլաններ ՄՓՎ ԲՊ բաժնի կողմից քննարկվել է և ի հայտ եկած թերությունները ներկայացվել են համապատասխան դպրոցների տնօրեններին: Ուսումնական հաստատությունների պլանները գտնվում են մշակման փուլում:

14.ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված դրական աշխատանքներին զուգահեռ, դեռևս անելիքներ կան միջին և կրտսեր անձնակազմի մասնագիտական և իրավական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

Դեռևս բավարար հիմքերի վրա չեն համայնքների, կազմակերպությունների ղեկավարների ու մարզային փրկարարական վարչության համագործակցությունը, ժամանակին չեն ներկայացվում պահանջվող փաստաթղթերն ու տեղեկատվությունները:

Բոլոր համայնքներում և կազմակերպություններում բացահայտված առանցքային թերությունները գալիս են բնակչության պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի ոչ պատշաճ իմացությունից, համայնքներում և կազմակերպություններում ՔՊ ոլորտի հաստիքային ծառայողի բացակայությունից:

Աշտարակի ՀՓՋ-ում քարշակման համար նախատեսված տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով Աշտարակի վարչական տարածքում փրկարարական աշխատանքները կազմակերպվում է Ապարանի և Թալինի ՀՓՋ-ների ուժերով և միջոցներով, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում դեպքերին ժամանակին սպասարկման համար:

Ստորաբաժանումները ապահովված չեն անհրաժեշտ սկզբնական հրդեհաշրջման միջոցներով, որոնց առկայությունը կնպաստեր Բյուրականի և Արայի լեռան հրդեհների հրդեհաշիջման աշխատանքներում:

ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ոչ բավարար է կատարվում, քանի որ ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումները ապահովված չեն անհրաժեշտ քանակի համակարգչային տեխնիկայով և սարքավորումներով:

Արագածոտնի ՄՓՎ և ստորաբաժանումներում առկա է 6 ստացիոնար, 11 շարժական և 32 դյուրակիր գերկարճալիք ռադիոկայաններ, որոնց միջև ռադիոկապը արդյունավետ չի գործում համապատասխան ուժեղացուցիչների բացակայության պատճառով:

2015թ հունիս ամսից ՃԿԿ-ի և 911 ծառայության գործարկումից սկսած ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ կրտսեր հրահանգիչները կատարում են 911 ծառայության և ՕՀՀ կրտսեր հրահանգչի ֆունկցիաներ, որը անհամատեղելի է և լրացուցիչ դժվարություններ է ստեղծում դեպքերի սպասարկման և արձագանքման կազմակերպման ժամանակ՝ հատկապես ամռան ամիսներին /հրդեհների ավելացման/ և ձմեռային ամիսներին /արգելափակումների և խցանումների/ ժամանակ: Նշված ժամանակահատվածում ՄՓՎ ՃԿԿ ստացվում է 250-450 հեռախոսազանգեր 5 ֆիքսված և 1 բջջային հեռախոսներից: Ոչ աշխատանքային օրերին և աշխատանքային օրերին 18:00-ից մինչև 09:00-ն հեռախոսազանգերը սպասարկվում է մեկ կրտսեր հրահանգչի միջոցով: Այդ օրերին դեպքերի արձագանքումը, սպասարկումը, տեղեկատվության փոխանցումը ըստ սահմանված կարգի խախտվում է ժամանակային առումով:

2017թ ընթացքում ՄՓՎ պետի հրամանով կազմակերպվել և անցկացվել են գիտելիքների ստուգման ստուգարքներ, որոնց արդյունքում անձնակազմի միջին մասնագիտական գիտելիքները գոհացուցիչ չեն եղել:

15.ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է

1. 2018թ-ին վարչության գործնեությունը նպատակաուղղել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում մարզի վարչական տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործնեության բարելավմանը, ղեկավար կազմի և ՔՊ մասնագետների պատրաստվածության բարձրացմանը:
2. ՈՒղիներ գտնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նյութական, տրանսպորտային և տեխնիկական ապահովումն իրականացնելու համար, համայնքներում նախաձեռնել պարզագույն պաշտպանական կառույցների ստեղծման գործընթացը:
3. Մարզպետի օժանդակությամբ հասնել մարզի բնակչության ազդարարման համակարգի վերազինմանը՝ ժամանակակից կապի և ազդարարման միջոցների ներդրման միջոցով, կազմակերպել առկա միջոցների խնամքն ու պահպանումը:
4. Հատուկ ուշադրություն դարձնել մարզկենտրոնում համալիր փրկարարական ջոկատի կազմավորման, ՔՊ համայնքային և օբյեկտային կազմավորումների պատրաստվածության բարձրացման գործընթացին:
5. ՈՒղիներ և միջոցներ գտնել մարզային փրկարարական վարչության շենքի վերանորոգման և տեխնիկական վերազինման, անհրաժեշտ գույքով ապահովման ուղղությամբ:
6. Փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները, ինչպես նաև հանձնարարականները և հրամանները ավելի արագ և օպերատիվ կազմակերպելու նպատակով առաջարկում եմ՝

6.1 Աստիճանաբար թարմացնել և վերանորոգել ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների պարկը, հատկատես Աշտարակի ՀՓՋ-ում քարշակման համար հատուկ տեխնիկա տրամադրելու ուղղությամբ, իսկ Թալինի ՀՓՋ-ում ջրատարի:
6.2 Ստորաբաժանումներին հատկացնել անհրաժեշտ քանակի սկզբնական հրդեհաշրջման միջոցներ:
6.3 Ռադիոկապի վիճակը բարելավելու նպատակով մարզի տարածքում /Աշտարակ, Ապարան, Ծաղկահովիտ/ տեղադրել ուժեղացուցիչներ՝ կապը ՄՓՎ-ի, ՀՓՋ–ների և մեքենաների, ՓԾ ՃԿԱԿ-ի, ինչպես նաև հարակից մարզերի հետ անխափան ապահովելու նպատակով:
6.4 ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներին հատկացնել համակարգչային տեխնիկա և սարքավորումներ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգելու նպատակով:
6.5 Համալրել ՄՓՎ ՃԿԿ-ն նոր հաստիքներով 911 ծառայության խնդիրները լիարժեք կատարելու համար:
6.6 Չնայած վերը նշված խնդիրներին, Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունը պատրաստ է կատարելու իր առջև դրված խնդիրները:

Պետ՝ փ/ծ գնդապետ Կ.Մարգարյան